



# ՄՈՒՍԱՅՔ ՄԱՍԻՑ ԶԱՅՆ ԸՆԿԵՐԱՍԻՐԱԿԱՆ

ՄԵՊՏԵՄԲԵՐ 1

1864 Բ. ՏԱՐԻ

Թիր 29

Խոնէսթ — Ուընան անուն գաղղիացւոյն  
«Ապր Յիսուսի» անուն գիրքը բոլոր Վը-  
րխատնեայ աշխարհի մէջ մեծ տարաձայնու-  
թեան եւ բանադառութեան նիւթ մը ըլլալը  
արդէն յայտնի է նաեւ մեր ազգայնոց։ Այս  
գիրքը մէկ տարուան մէջ քանակն աւելի ան-  
գամ եւ քանի մը միլիոն տպագրութիւն ունե-  
ցաւ մեծ գիրքով։ Ուընան ասկէ իրախուսուած-  
անոր մէկ փոքր գիրքով հրատարակեց գրեթէ  
նոյնափ մ'ալ այն տպուեցաւ։

Խւրոպայի լեզուներով մինչեւ ցայսօր ան-  
համար պատասխաններ գրուեցան անոր գէմ։  
Մեր ազգէն գաղղիարէն գիտող շատերն կար-  
գացին զայն, գաղղիարէն չը գիտող շատերն ալ  
անոր գաղղիարէնը կարդացողներէն ու լրագիր-  
ներու մէջ տրուած կարճառու ակնարկութիւն-  
ներէն այլ ընդ այլոյ գաղափարներ ունեցան ա-  
նոր վրայ։

Այս մարդուն գաղափարներուն համար հե-  
րետիկոսական է կըսեն. մենք ոչ հերետիկոսու-  
թեան ինչ ըլլալը գիտենք, ոչ հերետիկոսակա-  
նութիւնը եւ ոչ ալ գաղղիերէն լեզուն որ

զանիկայ քննենք, դատենք ու գէմ գրենք։  
նոյնպէս մեր կղերներն ալ մեզի պէս գաղղիերէն  
չեն գիտեր. Հին ատենը հերետիկոս մը եներ  
նէ, ամեն ազդի կղերը անոր գէմ կը գրէր ա-  
ռանց նայելու թէ հերետիկոսը ինչ ազգէ է,  
իր հերետիկոսութիւնը ինչ լեզուէ ըրած է. և  
նախ նոյն հերետիկոսին հերետիկոսութիւնը ի-  
րենց աչքին առջին կունենային իրենց հասկը-  
ցած լեզուին թարգմանուած։

Արդ՝ Ուընան եթէ իրաւ հերետիկոս մըն-  
է, պէտք է որ իր հերքումը առնե, ինչպէս ու-  
րիշ ազդի կղերէն, նոյնպէս եւ մեր կղերէն.  
բայց ի՞նչպէս պատասխանէ մեր կղերը, քանի  
որ ինք գաղղիերէն չը գիտեր եւ Ուընանի հա-  
յերէնը չունի։

Այս պակասը լեզունելու համար յանձն ա-  
ռաւ մեր Մեծարդոյ բարեկամներէն մէկը զա-  
նիկայ թարգմանելով հետզետէ գլուխ առ գր-  
ըւիս մեզի տալ, որ մենք ալ հրատարակեմք.  
ուստի նախ այս անգամ մեզի զրկած է անոր  
փոքր դիրքով հրատարակուածին ոկիզը Ուը-  
նանի գրած ազդը։

ՍԵԿՔ բոլոր անիկայ պիտի հրատարակենք  
ու այժմ մեր կողմանէ անոր վրայ եւ ոչ բան մը  
ըսելու . մեր անոր վրայ ըսելեքները բոլորը հրատարակուելն ետքի թողլով :

## Ա.Օ.Դ

Ասկէց յառաջ Յիսուսի վրայ հրատարակած  
նկարագիրս շատերուն ու շադրութիւնը գրաւե-  
լուն համար , պարտք սեպեցի հրատարակել նաև  
սոյն նկարագիրս , անանկ յարմար կերպով մը  
պատրաստուած որ գիւրստանալի ըլլայ աշխար-  
հիս բոլոր աղքատներուն եւ նեղեաներուն ,  
զորս Յիսուս ամենէն աւելի սիրեց . Հատ  
մարդիկ ցաւելով յայտնեցին որ գիրքն իր գնովն  
ու դիրքով ամենուն մերձենալի չըլլար , անոր  
համար սոյն նկարագրիս մէջ բնագրին ներածու-  
թիւնն , ծանօթութիւններն ու ընթերցովը բա-  
նադատութեան մասնաւոր հետազօտութեանց  
ենթակայ ընող կարծուած կէտերը զոհեցի . այս  
զանազան մասերը վերցընելովս երեք նպատակի  
հասայ : Եալ՝ գիրքս այժմ այնպիսի չափաւոր  
ձեւ մը ունեցաւ , որ ամեն փափաքող կրնայ  
զայն ստանալ . Երկրորդ՝ չեմ կարծեր որ անոր  
մէջ այնպիսի բառ մը , զոյց մը մնայ , որ հաս-  
կըցուելու համար նախաշաւիլ ու ամունքներ  
պահանջէ . Ա երջապէս՝ այս բարձումներով  
արդիւնք մ'ալ ստացայ , որ ինձ համար շատ  
յարդ ունի . Խ իմ գիրքս պատմագրի բացար-  
ձակ անտարբերութեամբ յօրիներ էին միայն  
Ճշմարտութեան ամենանուրը եւ ամենամիշտ  
խտիրը տեսնելու նպատակով : Ա յս համարձա-  
կութիւնը արդարեւ կրնար զայթակղեցընել  
շատ ազնիւ անձեր որ Քրիստոնէութեամբ կա-  
ճին ու կը զարդանան , շատ անդամ ցաւօք սրս-  
տի տեսած եմ այնպիսիներ՝ որոնց հաճելի բլա-  
լը սաստիկ կը սիրեմ , որ մէկէն դրքի մը ընթեր-  
ցանութէնէ կը դադրին՝ թերևս անոր մէկ քա-  
նի էջերը հաճելի եւ արդիւնաւոր չը գտնել-  
նուն համար . Ա պարձեմ շատ ճշմարիս Քրիս-  
տոննայներ այս փոքր դրքին մէջ զերենք վշտա-  
ցընող բան մը չը պիտի կարդան : Ա ո.ամսց իմ  
գաղափարներէս շեղելու բոլորովին դուրս ձգե-  
ցի այնպիսի խօսքերը , որոնք բնականաբար կը բ-  
նային ծուռ հասկըցուիլ կամ երկար բացատ-  
րութիւններու կը կարօտին :

Պատմութիւնը տարրալուծութեան , երկ-  
րաբանութեան նման դիտութիւն մըն է : Բա-

լորովին հասկանալի ըլլալու համար անանկ խո-  
րին ուսմունքներ կը պահանջէ , որոնց ամենա-  
բարձր արդիւնքը ժամանակներու , գաւառնե-  
րու , աղդերու եւ ցեղերու զանազանութեանց  
արժանիքը գիտնալին է : Ա յս օրուան օրս մեր  
մէջը օրինաւոր մարդ չի համարուիր այնպիսին՝  
որ ուրուականներու եւ կախարդներու կը հա-  
ւատայ . բայց երեխն երեւելի մարդիկ այս ա-  
մեն բաներուն հաւատացին , եւ կարելի է մին-  
չեւ այսօր տակաւին մասնաւոր երկիրներու մէջ  
այս տեսակ խարէութիւններու ճշմարիտ գե-  
րազանցութիւն մը կընծայեն . Ա յս անձինքը՝  
որոնք կամ ճանապարհորդութիւններով կամ  
երկար ընթերցանութիւններով եւ կամ ոգույ  
մեծ թափանձմամբ մը այն զանազանութիւննե-  
րուն չեն կցեր տեղեկանալ , անցեալի պատ-  
մութիւններուն մէջ գմնդակ բան մը կը գրո-  
ւնեն միշտ : Ա ամս զի՞ անցեալը որն որ այնչափ  
դիւցազնական , մեծ ու սկզբնական էր , քանի  
մը կարեւորագոյն կէտերու վրայ մեզ նման գա-  
ղափարներ չունէր : Ա պատմութիւնը  
թէ եւ իր վրայ ամենածանկը նախատինքներ ալ  
շարժելու ենթակայ ըլլայ , չի երնար այս դրժ-  
ուարութեան առջեւէն ետ քաշուիլ . Գիտնա-  
կան անկեղծութիւնը խոհեմ ստութիւնները չի  
ճանչնար : Գիտուն մը ճշմարտութիւն կար-  
ծած բանը բացատրելու մէջ նեղուիլը աշխար-  
հիս մէջ բաւական զօրաւոր պատճառ մը չէ :  
Հայց երբ կանգամ մը , առանց գաղտնի խոր-  
հուրդի ստուեր մը անգամ ունենալու ստոյգ  
կամ հաւանական կամ հնարաւոր կարծած բա-  
ներնին զուցած են , չե՞նք կընար մանր տար-  
բերութիւնները մէկդի ձգել՝ մի միայն մեծ բա-  
ներուն ընդհանուր ոգույն յարմարելու համար  
որ ամեն մարդ կարենան ու պարտաւորին զա-  
նոնք հասկնալ և իրաւունք չե՞նք ունենար ան-  
համաձայնութիւնները ջնջել մի միայն այս հին  
պատմութեանց մէջ յաճախ գտնուած բանաս-  
տեղծութիւններու ու յօրինուածներու վրայ  
խորհելու համար : Տարրալյցը դիտէ որ ածու-  
խէն զատ ուրիշ բանէ չէ աղամանդը : Գիտէ  
նաեւ այն եղանակները որոնցմասլ բնութիւնը  
այս խորին կերպարանափոխութիւնները կը գոր-  
ծադրէ : Ո իմթէ ասոր համար պարտաւորա՞ծ է  
արդիւնքի աշխարհի պէս խօսելէ եւ այն ամե-  
նագեղեցիկ գոհարեղէնին մէջ միայն պարզ կը-  
տոր մը դուտ ածուխ տեսնելէ :

Արդ՝ ասի նոր գիրք մը չէ։ Այլ նոյն իսկ և Վարք Յիսուսի անուն գիրքն է անոր երակարաբանութիւններէն ու նսեմութիւններէն աղջոտած։ Պատմագիր ըլլալու համար պարտաւոր էի այնպիսի Քրիստոս մը նկարագրել, որ իրեն աղջին դէմքի յատկութիւններն, գյոյն ու գծադրութիւնն ունենայ։ Այս անգամ իմ հասարակութեան ներկայացուցած է ձերմակ մարմարինէ։ Քրիստոս մը։ անարատ ձոյէ կորուած։ Քրիստոս մը, զինքը ՚ի լոյս՝ ածող զգացման նման պարզ եւ մաքուր Քրիստոս մը։ Ասուած իմ, թերեւս ասմենի աւելի ծշմարփիս է։ Ով դիտէ թէ չը կան անանի վայրիեաններ, ուր մարդէս ծնածը անարատ է, թէպէտ այս վայրիեանները երկար չեն, բայց կան։ Այսպէս գոնէ երեւցաւ Յիսուս ժողովորդին։ այսպէս տեսաւ զանի ժողովուրդին ու սիրեց։ այսպէս մնաց նա մարդոց սրտին մէջ։ Ահաւասիկ անոր մէջ ապրողն, աշխարհս զարմացնողն եւ անոր անմահութիւնը ստեղծողն։

Կրօնքի արատ բերելու պատրուակաւ ինծի ուղղուած յանդիմանութիւնը քսաններորդ անգամ չը պիտի հերքեմ։ Կարծեմ ես կրօնքի ծառայող եմ։ Սակաւաթիւ անձինը կերեւակայեն թէ երկշոտ լուռթիւններով ժողովուրդը գերբնականի վրայ ունեցած հաւատքը կորսընցընելէ կարգիեն։ Այսպիսի զգուշութիւն մը թէ եւ համեստ ալ ըլլայ, դարձեալ անօգուտ է։ Ժաղովուրդը այս հաւատքը կորսնցուց։ Ժաղովուրդը՝ այս մասին դրական դիտութեան հետ միաբանած՝ մասնաւոր գերբնականն, այն է՝ հրաշագործութիւնն բնաւ չընդունիր։ Արդ՝ պէտք է վճռել որ ասով մարդուս աղնուականութեանը պատճառ եղող բարձր հաւատալիքներէն ալ օստար սեպուած է։ Ասի ծանր սիսարնք մը կը բայց։ Ժաղովուրդը կրօնական է իր ընթացքով։ Եր՝ մահուան տուած յարգանքէն աւելի սրտառուուչ ի՞նչ կայ։ Իր քաջութիւնը, պարզութիւնը, դաստիարակուելու փափաքը, ծիծագաշարժ իրաց նկատմամբ ունեցած անտարբերութիւնը, դիւցանական մեծամեծ ազգութիւնները, ազնուական զգացմունքներու դիմելով՝ յուղուարթ յուղմունքներ յարուցանոյ արհեստական եւ բանաստեղծական գործոց վրայ ունեցած ճաշակը, փառաց եւ հայրենեաց վրայ իրաւած տեսն իր վրայ փայլած շարունակական երթափառարդութիւնը, ասոնց ամենն ալ կը

բօնքի եւ լաւագոյն կրօնքի ծառայելէ յառաջ կու գայ։ Ժաղովուրդը բնաւ նիւթապաշտ չէ։ Միայն գաղափարական վարդապետութեամբ հաճոյ կը լլուսի իրեն։ Եթէ պակասութիւն մը ունինէ, ան ալ գաղափարի մը վրայ խօսուած տեսն, անոր օգուտները դատելով ընդունելն է։ Ժաղովուրդին անկրօնութիւն քարոզելը տրխուը եւ զանի հին գերբնական հաւատալիքներու հետեւցնելը անօգուտ փորձ մըն է։ Անոր ամեն բան զրուցելն ուրիշ միջոց չը կայ, Ժաղովուրդը դիտութեան ամենաբարձր արգասիքները շուտով եւ տեսակ մը խորին բնական աղջմամբ կը մըռնէ։ Ալ տեսնէ որ մինչեւ հիմայ գոյութիւն ունեցող կրօնական տարագներուն եւ ոչ մէկը չի կրնար բայցարձակ արժէք մը ունենալ բայց կիմանայ նաեւ որ կրօնքին հիմն ալ ասոր համար չի կրնար խալատիլ։

Անցեալ տարագներուն յարգն անգամ անոր ազգելը, պատմութեան մէջ անոր մեծութիւնը ցուցնելը եւ այս հին տարագներուն ունեցած բարի եւ սուրբ բաները քանդակագրելը բարեպաշտ գործ լնել չէ։ Այս կը մտածեմ որ ժողովուրդը՝ հաւատքն, անձնուրացութիւնն ու անձնանուրիութիւնը ցնորդ սեպած օրէն իր ազատութեանը կունակ դարձուցած կը լլար։ Երբեմն թէ քաղաքական եւ թէ կրօնական ամենամեծ շարժումներուն խառնուած խել մը սըսալմունքներն այս շարժումներուն վրայ համակրութիւն եւ զարմանք չաղդելու առիթ չեն կրնար ըլլալ։ Արնայ մէկը աղէկ Գաղղիացի մը համարուիլ առանց սուրբ անօթին Հաւատարու։ Արնայ մէկը սիրել զՃան—ո՛ Արք առանց անոր տեսիլքներուն իրականութիւնը ընդունելու։

Ահա ասոր համար խորհեցայ որ ժողովութեան ամենազարմանալի յեղափոխութեան նկարգիբը, որուն յիշատակը պահած են, կրնար ժողովրդին օգտակար ըլլալ։ Հոս կը տեսնուի ծշմարտապէս իր լաւագոյն բարեկամին կեանքը։ Քրիստոնէութեան սկզբենաւորութեանց բոլոր այս դիւցանականութիւնը երբէք տեղի ունեցած ամենամեծ ռամկականութեան պատմութիւնն է։ Յիսուս աղքատները սիրեց, հարուստ եւ աշխարհասէր քահանաները ատեց, գտնուած իշխանութիւնը կարեւոր բան մը ճանչցաւ, հա-

\* Գաղղիացւոց թագաւորները օծելու իւղը պարունակող անօթին է։

մարձակ կերպով բարցյական օգուտները կու-  
սակցութիւններու հակառակութիւններէն վեր  
դասեց . քարոզեց որ այս աշխարհս երազ մըն է ,  
եւ անոր մէջ գտնուածները պատկեր եւնկա-  
րագրութիւն են եւ թէ Աստուծոյ ճշմարիտ  
թագաւորութիւնը գաղափարականն է , եւ գա-  
ղափարականն ալ ամենուն կը վերաբերի . Այս  
վարդապետութեանը յաւիտենական միմիթարու-  
թեանց կենդանի աղքիւր մըն է , որ քաղցր զը-  
ւարթութիւն մը կազդէ . առանց ունայն կեղ-  
ծաւորութեան բարուց նորոգութիւնը կը քա-  
ջալերէ , աղատութեան ճաշակ կուտայ . եւ  
վերջապէս մենէ առջի ժամանակներուն մէջ ե-  
ղած ընկերական խնդիրներուն վրայ զմեզ կը  
խորհեցնէ . Յիսուս աս կէտին վրայ զարմանա-  
լի խորութեամբ հայեցուածքներ կը բանայ . Եր  
վարդապետութիւնը սորվողը շատ աղէկ կիմա-  
նայ որ քաղաքականութիւնը չի կրնար մնատի  
խաղալիք մը սեպուիլ , որ գլխաւոր բանի՝ որ մը  
մարդոց երջանկութեանը , կրթութեանը եւ  
առաքինութեանը աշխատիլը պիտի ըլլայ , որ  
այսպիսի խնդիրներէն հեռանալու համար ե-  
ղած բոլոր ջանքերն ապարդիւն պիտի ըլլան .

Սաստուծոյ խոնարհած ծառանելք ու աղախին նե՛ր, որ օրուան եւ տօթոյ ծանրութիւնը կը բառնաք, գործաւորնե՛ր՝ որ մեր մտօք կանդած տաճարը դուք ձեռքովնիդ շինելու կաշխատիք, ճշմարտապէս սուրբ քահանաներ՝ որ փառամոլ սաղուկ կեցիներու տիրապետութեանը տակ լրութեամբ կը հառաչէք. Խեղջ կիմիկնե՛ր՝ որ տակաւին բարւոյն մասը տկար ընկերական վիճակին մէջ կը նեղեք. ցուրտ խորչերու խորը հրաժարած բարեպաշտ մշակուհինե՛ր՝ եւ կէ՛ք այն ուրախալի հանդէսին, որ օր մը Աստուած իր ժպիտովը պարզասիրտներուն համար պատրաստեց : Դուք Յիսուսի ծշմարիտ աշակերտներն եք : Ունէ որ մեր այս մեծ տէրը վերըստին գայ, Գիեննեսարեթ ընին եզերքը զինքը շբրջապատղ սիրելի եւ հաւատարիմ խումբին ճշշմարիտ սերունդը ո՞ւր կը կարծէք որ գանայ . Միթէ հաւատոյ հանդանակներու ախոյեաններուն մէջ, զորոնք չէր ճանաչեք, պաշտօնական եկեղեցւոյ մը մէջ, որ իր ընդդէմ պատերազմած բանքը բանելը կը պաշտպանէ . Հին գաղափարներու համախոհներուն մէջ, որոնք անորսկզբունքը իրենց շահերուն եւ կիրքերուն հետ կընկերացնեն : Ոչ մեր մէջը պիտի դանէ, մեր

որ կը սիրենք ճշմարտութիւնը , յառաջադիմութիւնն ու ազատութիւնը . Եւ թէ որ որ մը կը խարազմանվով կեղծաւորները վանելու ենք , ու բո՞նց կը խորհիք որ ճշմարտացնէ փարիսեցւոյն առակը . Եւոնց վայ՝ որ կըսեն . « Վատուած շնորհակալ եմք ենէ , որ այս մեծ յանցաւորին , այս թշրւառականին եւ այս ոչինչ մարդուն պէս չեմ» , թէ անոնց վայ՝ որ կըսեն . « ով դու՝ որ կարելի է չեմ ճանաչել , բայց կը սիրեմ եւ կը պարտաւորիմ ամէն բանէ առաջ անկեղծ սրբատի մը մեծարանքը խնդրել , յայտնէ՝ զքեզ , վասըն զի իմ միակ փափառք քեզ տեսնել է » . « Եւ յեցէք հորիզոնը . հոն կը տեսնուի արշալուսոյ ծագումը , հրաժարմամբ ազատութիւնը , աշխատութիւնը , բարութիւնը եւ փոխադարձ օգնականութիւնը . Պիտութեամբ ազատութիւնը որ մարդկութեան օրէնքներուն խորը թափանձելով եւ կամաց կամաց նիւթը հնազանդեցնելով բոլոր մարդոց արժանապատութիւնը եւ ճշմարիտ աղատութիւնը պիտի հաստատէ . Վմենքս ալ մեր պարտականութիւնը կատարելով՝ պատրաստենք ուրեմն ապագային արքայութիւնը . Խակ ես երջանիկ պիտի ըլլամ , եթէ մէյմը անցեալին այս պատմութիւններով և ներկան ձեզի մոռցնել տուի եւ նորոգեցի Ձեզի համար այս աննման համառօտքերիթուածին քաղցրութիւնը՝ որ հազար ութն հարիւր տարիէն ՚ի վեր ձեզ նման խոնարհները ուրախութեամբ լցուց .

ԷՐՆԻՍԹ—ՌԵՆԱՆ

## ԶԱՆԱԶԱՆԻՔ

— Ալ անենք Սուրբ Կարապետու վանից միաբան Արիստակէս վարդապետի ըրած անկարգութիւն, որ Պօլիսոյ մէջ կը դորձէ, կարծեմք թէ հայոց հոգեւորականց մէջ պիտի չնայ այդ չար ընթացք. պօլիս որ արքայանիստքաղաք մըն է, եւ հայոց պատրիարքարանի տեղըն է. բոլոր հայաստանի գլուխն Պօլիսոյ սրբազն Պատրիարքն է, Ա. Ա արչութեան. եւ մանաւանդ հօգեւորականաց Դաստ. եւ յարձակումն, սրբազն պատրիարքի. Եւյազդինէ. վերաբերեալ. Ալ լսենք որ տիքրանեան Մկրտիչ վարդապետ, Արիստակէս վարդապետի հետ. երդմամբ դաշնինէ տուած մէկզ մէկու ՚ի կորուստ Խոմեան Մկրտիչ վարդապե-

տի . թշնամիք հակառակեն ՚ի միմեանց . բայց  
՚ի կորուստ մարդկան միաբանին . Ա . Կարապետու  
տու միաբան վարդապետք . եւ հրաշագործ Մը-  
կրտիչ վարդապետ . այս քանի ժամանակէ մէկ  
ըզմէկու հակառակ են . կարծեմ թէ հրաշա-  
գործ իւր գրած գրքին մէջ բաւ տեղեկութիւն  
տուեր են , թէ Սուլրը Կարապետու միաբան  
վարդապետք . այս չարութեան հետո գործեցին  
այսօր կը լսենք հրաշագործ միա՛վորերէ , անոնց  
հետ դաղնի տեսակով մը , եւ կուղէ Ալի փա-  
շային երդալ , կրկն տեսակ տեսակ մատնու-  
թեան խօսալ . կը զարմանայ սուլրը եկեղեցին .  
հրաշագործի համար բժիշք բժշկեայ զանձն  
քոյ . կարծեմ թէ հրաշագործի երած անկար-  
գութիւն . որ խղճալի Քուրոստանու հայոց  
թէ քահանայից , եւ աշխարհականայ . գործե-  
րէ . բոլորն մեր քով գրված կայ . եւ հագուկ  
մահսեր ունի տեղ առ տեղ . փոխենք զհրաշա-  
գործ . խօսանք Քուրոստանու չարագործ . եւ  
մարդու մահուան պատճառ Մկրտիչ վարդա-  
պետ . մեղք հրաշագործ ես ասի . կարծեմ թէ  
Քուրոստանու Օօրաւայ գիւղի Պարոն  
Մակարի . եղբօր որդի պարոն մարդարի տուած  
սանաթ . Մուսայը Մասեանց Խմբագրի քովն  
պահած է . ըստ ժամանակին . չարագործ վար-  
դապետ պիտի պատասխանատու ընայ , զօրա-  
ւայ Պարոն Մարդարի . Պօլիսոյ հասարակու-  
թիւն եթէ ներէ չարագործ Մկրտիչ վարդա-  
պետի . կարծեմ թէ Քիւրոստանու խղճալի  
հասարակութիւն . պիտի չը ներէ այդ վարդա-  
պետի չար ընթացքին . թող այդ չարագործ  
Մկրտիչ վարդապետ . եռւրեան մեղք . թող  
ապաշխարհի , թէ չարագործին թող հրամա-  
յէ , Հայոց Պատրիարքին . Սրբազնն Պատրի-  
արք եւ Ա արշութեան գտա մանալու , մէկրդ-  
մէկու հետ չարագործ Տիքրանեան Մկրտիչ  
վարդապետ . միշտ զայդ չարութեան Քիւր-  
ոստանու վիճակ գործեյիր յազգ . ներէ եւ վե-  
ղարակից հայր վարդապետներ խնամք տարած  
է եռւրեան վրայ . նիք գիտէ թէ յազգ իր մեծ  
համարում ունի եռւրեան վրայ . մեղք վեղար  
դնողին , եւ Ա ստուած օգնական Խոօղին :

Մկրտիջ ՎԱՐԴԱՊԵՏ ԲԱԳԻՍՏՈՒՆԻ

մակագիրը կը յանդգնի վարժարանը հոգաբար-  
ձութիւնը եւ գործակալները պախարակել ան-  
խնայ .

Եթէ նաևակագիրը օտար մէկը ըլլար , ան-  
տարակոյս արհամարհու լուռթեան կամ ուրիշ  
տեսակ պատասխանաց սպասելու էր , բայց որով-  
հետեւ նոյն իսկ նամակին մէջ լիշած վարժա-  
րանին յառաջադէմ աշակերտներէն մէկն է , լո-  
րոնցմէ ոմանք շատ եւ ոմանք սակաւ ժամանակ  
մեր իսկ խնամքներն վայելեր են եւ որոնց վրայ  
բնականաբար հայրական գութ ունիմք , յաւե-  
լով իւր դիւրախար պարզութեանը վրայ՝ պարտք  
կը սեպեմբ իրեն հրապարակաւ զգուշութեան  
դաս մը աւանդել :

Պէտք է գիտնայ , անփորձ տղայն որ՝ ինք  
շահամնդիր եւ խոռվասէր անձանց չար թե-  
լադրութիւններու զոհ՝ միանդամայն իրենց գոր-  
ծիք է եղած . այնպիսի անձանց՝ որոնք գիտեն  
միայն սպաշտոնի եւ փառաց ծարաւող յարդիկ  
տակէ ջուրքալեցնել , եւ անդուլ մեքենաւորու-  
թեամբ իրեն պէս միամիտներուն տկար կողմը  
բռներով՝ խապառ աղմուկ եւ խոռվութիւնյա-  
րուցանել ՚ի մաս ազնիւ եւ բարեմիտ գիւղաց-  
ւոյ՝ որոնք , մինչդեռ նոքա կը գործեն , հանդ-  
շելք ըստուն :

Չեմք կարծեր երբէք որ Պ . Քեահեա-  
եանը իւր կամօքը եւ ներքին համոզմամբ գրած  
ըլլայ նոյն նախատալց նամակը , քանզի վարժա-  
րանը , եթէ լաւ գիտեմք , — եւ ինքն ալ կը վը-  
կայէ — միշտ բարեկարգութեան մէջ ընթացած  
է , եւ ամեն պարկեշտ գիւղացի եւ հիւր բը-  
նակիչ զոհ են անկէ . իսկ հոգաբարձուն արդա-  
րեւ ձեմարաններու աշակերտ չէ բայց յանդու-  
զըն պարսաւագետին կեղծել ուղածին պէս գի-  
տութեան թշնամի ալ չէ եղած երբէք , որուն  
ամեն զինքը ճանչցող կը վկայեն եւ վերջին բա-  
րիներս ալ նոյն իսկ վարժարանին ստեպ տուած  
քննութիւնները , մեծապատիւ քննչաց ստո-  
րագրեալ վկայութիւնները եւ ներկայ վիճակը  
բաւական կը ցուցնեն թէ այդ զրոյցը ինչ աս-  
տիճանի կարեւորութիւն կրնայ ունենաւ . մա-  
նաւանդ եթէ նա անբաւական մէկը ըլլար եթէ  
նոյն փափուկ պաշտօնը ՚ի նպաստ ազգին ուրիշ  
շէն թաղեր ալ երկար ատեն վարած չըլլար , վար-  
ժարանին մշտնչենաւոր բարերար Մեծապատիւ  
Միւպահեածեան Յակոբ աղայի վստահութեա-  
նը արժանի չէր ըլլար՝ որուն թափանձանօքը

ազդասիրածքար երկար ատենէ՝ 'ի վեր գիւղիս վարժարանին հոգաբարձութիւնը կը վարէ՝ Եթէ կան արժանաւորագոյն գիտնական անձինք —որոնք ցարդ Անձալատիւ բարերարին աչքէն վրիպելու չեին—թողբարեհամին նոյն պաշտօնը յանձն առնելու եւ իրենց երեւակայած անկարգութիւնը բառնալու։ Ա արժապետաց նկատմամբ եղած չարախօսութիւնն ալ, ինչ աստիճանի իրաւ ըլլալը առաջններէն կրնայ մակաբերել ամեն աղատամիտ անձն։

Այս բաները անշուշտ, անզգոյշ պարոնը վարժարանը վատահամբաւելու, հոգաբարձուն ձանձրացնելու եւ վարժապետները վհատեցնելու նպատակաւ կընէ, չարաշունչ թելադիրներուն ուստ ըրածին համեմատ—եւ գուցէ ինքն ալ իրեն շահ մը կերեւակայէ խեղճը—բայց չարաչար կը խարուի. ինչպէս ամեն աղատամիտ պարկեշտ թաղեցի նոյնպէս հոգաբարձուն եւ վարժապետները՝ այս եւ այս տեսակ անձունի եւ անտեղի զբարտութիւններուն արժեքը՝ պատճառը եւ նպատակը լաւ գիտեն։ Այս ըսածներնիս քիչ օրէն աւելի աղեկ կը բացատրեմք։

Ա արժապատու փոքր ՚ի շատէ յառաջադիմութեան մէջ է. եւ ասոր համար ուսանողաց ծնողքը՝ նորա բարերարին եւ գործակալաց օրհնութիւններ եւ շնորհակալութիւններ կը մատուցանեն անդադար. եթէ ժամանակ մը յառաջ դպրոցին յառաջադիմութեանը խոչընդուն եւ Վզգին վկասաբեր խաղեր—սոլիբեցնող անարժան վարժապետ մը կը մնուցանէր յակամայից իւր ծոցը, հիմայ բաւական ժամանակէ հետէ աղատած է նորա ձեռքէն եւ որուն յանդգնութեանը եւ վարժարանին չարախօս մնալուն համար այս օրերու ալ գառապարտութեան ենթակայ եղաւ ՚ի Պատրիարքարանի, յիրաւի նորա եւ նորայնոց յանդուգն չարախօսութիւններէն բոլորովին զերծ չէ տակաւին բայց կը յուսայ Վզգային բարեխնամ Ա արչութեան շնորհիւ, այս բարերադութեան ալ ժամանել։

ՀՈԴԱԲԱՐՁՈՒՐ  
ՌՈՒՄ ՀԻՄԱՐ

1864 Օդոստոս 21

— Եկեղեցական ասմանց տեղեակ, Հայկաբան, Թուուաբան, և մաքուր գիր ունեցող Հայերիտասարդ մը կը փափաքի այնպիսի տան մը մէջ գասատուութեան ընդունուելու ուր իր ամուսինն ալ կարենայ ընդունուիլ իւր յանամածու։ Ուզողը կրնայ Հանդիսիս գրասենեակը գալու

— Եղբարեւ խիստ հաճելի է ինձ տեսնել խումբ մը ժողովուրդ որ կուտեն, կը խմեն կերպեն, կը պարեն եւ դոնէ օր մը իրենց վշտերն կը մոռնան, սակայն ասոր հետ մէկուեղ ինձ անվայելու չերեւայ որ այս տեսակ հանդէսներ Արօնական տօնի մը առթիւ լինին եւ ան ալ անպարկեշտութեամբ. ժողովուրդ մը որ կուզէ օտարաց սիրել եւ յարդելի լինել ինքպինքը քիչ մը կըթերու է, եւ թէ որ կըթեալ չէ՝ աշխատելու է նմանիլ կըթեալ ժողովրդոց, Անդղայիք, ու Գերմանացիք այս մասին մեզ համար ընտիր օրինակներ են, որոնք իրենց Արօնական տօները ամենայն պատկառանօք կը կատարեն եւ զուարթ հանդէսներուն մէջ ալ շէնք ու շնորհք ունին. հաւատա ինձ ընթերցող որ մեր հանդէսները խիստ մօտ նմանութիւն ունին վայրենի ու կռապաշտ ազգաց հանդէսներուն, ըստ որումնոցա բոլոր զուարթ հանդէսները կրօնական տօնի մը առթիւ տեղի կունենան եւ խիստ անպարկեշտութեամբ, ոդելից ըմկելիք կը խմեն մինչեւ որ ճամին, մերկ կանայք կը խաղընեն մինչեւ որ կատղին եւ մէկուեղ կու հանդէսներու մինչեւ որ մեռնին. ճիմա կը հարցընմեր Արօնական հանդէսները ասոնցմէ ի՞նչ տարբերութիւն ունին, չենք խմեր ոդելից ըմկելիքներ՝ մինչեւ որ դատողութիւննիս կորսրնցնեմք, չեմք խաղընել տար չինկեանէի կնիկներ՝ մինչեւ որ բորբոքիմք եւ այս պատճառներով շատ անդամ կուիւներ չե՞ն ծագեր մեր մէջ. Վստուածանայ տօնին առթիւ ասոնք տեղի չե՞ն ունենար Ծակերիրաաղի Վակէմուաղիի Պատրքէօյի եւայլն տեղերուն մէջ. Խաչէ տօնին ի՞նչ խայտառակութիւնք կը պակսին Վրմաշու վանքին մէջ ու բորբոքիմք ։ Վ կղեր գիտե՞ն արդեօք որ բոլոր ասոնք քու շահամիրութեանդ եւ պարտազանցութեանդ հետեւանդներն են։



ԲՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ Ա.ՄՈՒՍՆՈՒԹԵԱՆ

Գ.

Վրիպմունք Դաստիարակութեան

Վմուսնական խնդրոյ հետ կապուած ՚ըրժուարութիւններ կան՝ որոնց վերայ հազեւ թէ ուշդրութիւն եղած է. ասոնցմէ ումանք մանկավարժութեան սխալմունքներէն յառաջ կուգան. այս մանկավարժական սխալմունքները

կեղծ գոյնով մը կը ներկայացնէ ամռանութիւնը տղայոց, այս շարեաց առջեւը կարելի եղածին չափ շուտով առնելու եմք . ՞Օնողը իրենց մանկավարժական պարտուց մէջ մեծամեծ չարեաց պատճառ կը լինին՝ երբ սիալ գաղտիար տալու կաշխատին իրենց զաւակներուն ՚ի մասին մարդկային սերունդին .

Տղաք կեղծ կրթութիւն չառած ամեն բանի պատճառը վնտուելու մեծ տրամադրութիւն ունին . տղայոց այս հանգամանքը ոչ կոտրելու եւ ոչ ալ գեշ դործածելու է . օրինակով մը բացատրենք .

Երբ մանկիկ մը կը ծնի եւ կը յանձնուի տղայոց իրը քոյր կամ եղայր նոցա մէջ մեծ ու բախութիւն մը կամ ցնծութիւն մը կը տիրէ , սակայն այս հրծուանաց ամենուն վրայ ինքը լին քը յայտնէ հետաքրքրութիւնը որ կը մղէ արդարեները հարցնելու թէ « մանկիկը ուսկից եկաւ . հիմա տղայոց այս հետաքրքրական հարցման ճշմարիտ պատասխան տալը այնքան գեշ հետեւութիւն չունի որքան որ ունի սուտ պատասխան մը , եւ ըստ իս եթէ ըսուի տղայոց թէ իրենք գեռ փոքրիկ եւ շատ բաներու վրայ տգետ լինենուն չեն կարող հասկնալ մանկիկին ինչպիս գալը եւ թէ՝ եթէ մեծնան ու ուսմունք առնեն , այն ատեն կրնան հասկնալ , ասով չէ թէ միայն ապահով , այլ նաեւս ճըշմարիտ խօսած եւ պատուաւոր ընթացք մը ունեցած կը լինին .

Յաւալի է որ ծնողը վիտսանակ այս տեսակ պատասխան մը տալու անթիւ յիմարական սուտերով տղայոց հետաքրքրութիւնը աւելի կը գրցրեն . ոմանք կը սեն թէ « դահեակի բերաւ , ոմանք ժամակոչը , ոմանք տէր պապան » եւ շատ քիչերն ալ կը սեն թէ Վասուած խրկեց .

Ենթագրելով թէ գտնուին այնպիսի տղաքներ որ իրենց ծնողաց սուտը կը լին եւ մինչեւ իրենք ալ ամռանանան որդենութեան վրայ ճշմարիտ գաղափար մը ըստամանան , սակայն կը հարցնեմ խարւողը իւր ծնողք ըլլալու օրը ի՞նչ հարցափար պիտի ունենայ իւր ծնողաց վրայ նոգաղափար պիտի ունենայ իւր ծնողաց վրայ նոգաղափար պատճառ մարդող իւր սերունդին գատապարտուելուն , ուստի մայրերը գողալու չե՞ն եր սուտ կը խօսին իրենց ամենէն սիրելիներուն եւ կը մեղսնչեն Վասուածով գէմ . ես ամենեւին չեմ

կը նար հաւատալ որ իր գաւակները խաբող մայր մը կրնայ պատուաւոր եւ Ճշմարտապէս սիրելի լինիլ իւր զաւակներուն .

՞Ծնողաց այս ստախօսութիւնը թէ եւ աշխարհք արդարացնելու ելք , ես սա կը պնդեմ թէ սուտ մը որքան ալ փոքրիկ լինի որքան ալ ՚ի պահանջել հարկին լինի , տակաւին մեղք է Վասուածով գէմ եւ պատիմն ալ պատրաստ . կը կըրկնեմ ծնողք մը իւր ստախօսութեամբը իւր զաւակին մտաց գատաստանին առջեւ կը խայտատառակուի եւ իւր յարդք կը կորսընցունէ .

Դարձեալ ծնողաց պնորոշաբանութիւնը սաստիկ կը գրգռէ տղայոց հետաքրքրութիւնը , ըստ որում բնական է մարդուս որ իրմէ գաղտնի պահուածը գտնելու կամ գիտնալու աշխատի , մանաւանդ երբ գաղտնապահը իւր սիրելին լինի . Պէտք է գիտնանք որ մարդկային բընաւորութիւնը տարբեր չէ տղայոց վերայ , եւ անհիմն է մեր այն կարծիքը որ կը կարծենք թէ տղաք կէս հետազոտողը են , ասոր հակառակ նոքա ընդհանրապէս արծիւի աչք ունին , որոնք չէ թէ միայն շուտով կը մբռունեն , այլ նաեւս կը խորհին ու կղգան , մանաւանդ այս իրողութեան մէջ նոցա հետաքրքրութիւնը կը բարձրանայ եւ մաքր գործութիւնը կը շատապէ եւ ընդհանրապէս նոցա խորհուրդը բուն իսկ ծածկեալ առարկային կը դառնայ եւ փոքրիկ պատեհութիւնը մը կարծածին աւելի իւմաստուն կը լինէ :

Եշրանի այն տղաւն որդյունկերները այս պարագայիս մէջ իրեն իմ կամ թակարմ մը չեն լինի :

Օձի պէս խօրագէտ ու աղաւնիի պէս միամիտ շատ քիչ կայ մեր մէջը՝ մենք շատ անդամ տղայոց քով այնպիսի յիմարական խօսքեր կը լինենք եւ այնչափ կը ստեմք զանոնք որ շատ անդամ խեղձերուն չարութեանը , թշուակութեանը ու կործանմանը պատճառ կը լինիմք :

Յարունակելի :

Կարմիր փունջեր վարդէն հիւսած ,

Հայ օրիորդ փափկիկ ձեռքով —

Օուարթալէմ մեղմիկ ձայնով —

Վազէ նուիրէ համատարած —

Փառաց արժան վսեմ եղբօր ,

Վաեմ եղօրդ ազնուափայլ :

Վաղե՛, ծաղկանց բուրե՛ հոտեր։  
Դեռ հոս կեցեր, չե՞ս առներ քայլ։

Վաղե՛ աղջիկ, սփռե՛ վարսերդ  
Ոսկի գունիկ, ոտքերուն տակ։

Եւ թռչիկդ խաւըե՛ շուտով

Ի հայրենիդ, թէ յիշատակ

Ըսմահութեան ՚ի լոյս ածեց

Ըյն հանճարեղ Հայկայ զաւակ,

Օոր յարդեցին իմաստասէրք,

Որ Հայ անուն նա մեծարեց։

Վաղե՛ կուսան, տո՛ւր մեծարանք

Եւ զուարթնոց կոչէ խումբեր,

Համախմբիկ գայե՛ք յառաջ

Ըսմահութեան տո՛ւք սփոփանք։

Ուր ոսկեդար, ուր նազուհիդ,

Հայը նիրհէ ։ շուտ, արթընցուր,

Թէ նոր սերունդ զայն նորոգեց,

Կենդանութեան աւետիս տուր։

Եւ առաջնորդն Հայոց իշխան,

Ըշխարհային անդամ բարեաց,

Կուզեռ յայսսեմ վեհիդ անուն

Վ սեմափիայլ Սարդիս Պալեան։

ՊԱՆԴՈՒԽ Յ. ԳՈՒՐԳԵՆԵԱՆ.

## ԾԱՆՈՒՑՄՈՒՆՔ

### ԷԼԻՉԱ

ԿԱՐ

Վերջին ԱՐԵՎԵԼԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԺԱՄԱՆԱԿ  
ՏԵՂԻ ՈՒՆԵՑՑՄ ԽՄԱԿԱՆ ԴԵՊ ՄԲ

240 Երեսներէ բաղկացեալ պատերազմական  
վիպասանութիւն մըն է, որ կը պարունակէ եւ  
րեք վիրահարական եւ ողբերգական պատմու-  
թիւններ, Հայոց, Պուլկարաց, Խոտալացոց,  
Ոռուսաց, Պետուին արագներուն եւ Վիժու-  
տերու զանազան ցեղերուն եւ նոցա սովորու-  
թեանցը վրայ տեղեկութիւններ, Վարեւելեան  
պատերազմաց մէկ քանին եւ Արևիստրէի պա-  
շարման նկարագրութիւններն եւ Յիսուսեան

կարգի Արօնաւորաց, Ապանիոյ եւ [Ո]տոմէլի  
աւազակաց վրայ գիտողութիւններ։

Ալ ծախուի օրագրոյս գրասենեակը, Մահ-  
մուտ փաշայ Բիեր Թարուայի գործատունը թիւ  
47 եւ ամեն գրածախներու քով։ գին 20 զրւ։

ՀԵՏԱԶՕՏՈՒԹԻՒՆ ՏՕՄԱՐԱԿԱՆ ՎՐԻՊԱԿԱՑ  
Ի ՏԵՐ ԵՐԵՄԻԱ. ԳԱՀԱՆԱՅԻ ԽԱՍԴԻՒԴԻ

30 Երեսներէ բաղկացեալ տետրակ մի է,  
որուն մէջ 25 տարիէ ՚ի վեր Վզգային տարեկան  
Օրացոյցին հեղինակ արժանապատիւ Տէր Ե-  
րեմիա քահանան Վզգային տումարական հա-  
շիւներուն յայտնի վրիպակները ծանուցեալ փաս-  
տերով կը ցուցնէ, եւ կը խոստանայ միանգա-  
մայն որ եթէ Վզգային ձեռնհաս իշխանու-  
թիւնները հաճին, այն վրիպակաց ուղղութեա-  
նը պիտի աշխատի՝ առանց փոքր փոփոխութեան  
մը տեղի տալու թէ ՚ի ծէս եւ թէ յարարողու-  
թիւնս Հայաստանեայց Առւրբ Եկեղեցւոյ։  
Ալ ծախուի Մայրաքաղաքիս ամեն Հայ գրա-  
վաճառաց քով զին Յ զուրուշ։

### ՊՍԱԿ

## ՏՂԱՑՈՑ

ՆԵՐՄԵՍ Ս. ՄԷԶՊՈՒՐԵԱՆ

Աս գեղեցիկ եւ ընտիր գըքոյկը, մեծ ըն-  
դունելութեան արժանի է, ամեն որդեսէր ծը-  
նողը եւ ամեն աշակերտասէր գաստիարակներ  
պարտաւոր են մէյմէկ օրինակ ծախու առնել  
վասն զի գըքին նպատակը որբան որ ազնիւ է  
նոյնքան ալ ոճը պարզ, մաքուր, կոկիկ եւ բա-  
րոյականութեամբ զարդարեալ։

Ալ ծախուի ամեն Հայ գրավաճառաց քով  
գին Յ զուրուշ։

## ԱՐԵՒԵԼԵԱՆ ՔՆԱՐ

Սիրահարական Երգեր նուիրէ Հայ Երի-  
տասարդութեան Պ. Վ. Ն. տետր 1.

Սիրահար Երիտասարդաց համար աղւորիկ  
տետրակ մըն է եւ կը ծախուի ամեն գրավաճա-  
ռաց քով 40 փարայ։

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ո. Յ. ՔԻՒՐՔՃԵԱՆ  
ԿՈՍՏԱԴԻԱԿՈՒԹՅՈՒՆ, ՖԻՆՃԱՆՃԱՐ